ეროვნული
ბიბლიოთეკა

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, մայիսի 28-ին. Թիֆլիս. №22

Лит. С. БЫХОВА

—Լացէք աստղիր, օր ու գիշեր—լացէք ձեր բաղդն, որ որբ մնացիք։
—Ի՞նչի, ի՞նչի պիտի լաց լինենք—փառք Աստծոյ, պէտք է նոյն իսկ ուրախանալ. եթէ մէկը մեռաւ—տասնեակներով յաջորդներ թողեց... մէկին տաս՝—դա օգուտ է։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 Թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր բնտանիքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейнный пер., Редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Gaucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱՑԻ»

ԲԱԺԱՆԵՑՈՒՄՆԵՐԸ

Տարեկան . . . . . 5 ր.
Կէս տարին . . . . . 3 »
Երեք ամիսը . . . . . 1 » 50 կ
Ամիսը . . . . . — 50 »
Թիֆլիսում տարեկան . 4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան . . . . . 12 ր.
Կէս տարին . . . . . 6 ր.
Երեք ամիսը . . . . . 3 ր. 50 կ.
Մէկ ամիսը . . . . . 1 ր. 20 կ.

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75% զեղչ

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՑԻ» ՕՐԱՑՈՑՑ

1911 ՄԱՅԻՍ 31 օր

28

Суббота ՇԱԲԱԹ Шабатъ

Լուսնի 14

29 (կիր.) Անուանակոչութիւն Լևոնայ գրագրին անմահի, որ ի մէջ Մատրաստայի կանգնելարկային մարտիրոսացեալ կլպէր ու զՂէր և որպէս սպանդ ջրտեալ, քամէր զդիւղացոցն միամրաց։

30 (բ. շ.) Յիշատակ մեռելոց ուխտաւորաց և ձիաւորաց ի Թելէթ մայրաքաղաքին, որք մուրազներին հասնելու համար լիքը գնացին, բայց դատարկ վերադարձան։

31 (գ. շ.) Տօն սրբոցն այնոցունց, որք ի խելագարութեան և հիանդութեան եկմալեանի երկու աչօք քնած էին, բայց երբ մեռաւ երաժշտագէտն, երեք աչքով զարթնեցին և երկար ժամանակ չարչարեալ, թաղեալ և 3-րդ ամսին յարութիւն առեալ Ագնուանցաց թատրոնում կօնցերտ արարին, բայց ազգն հայոց ոչ գնահատեաց։ Աստուած Ս. Մանդինեանի համբերութիւնն պարգևեսցէ զնոսա։

1 (դ. շ.) Պահք։ Երանի պահողաց, զի այդպիսեաց է արքայութիւնն երկնից։

2 (և. շ.) Տօն ժեսն—թիւրքաց ամենայնից, որք սահմանադրութիւնն կարծեցեալ հալին որպէս իւղ Ուղունլարու և չքացնեն որպէս ձիւնն Շիլափլաւի գօրայիւ։

3 (ուրբ.) Անուանակոչութիւն սրբոյն առաջնորդի Շամախու, որ օրական 6 անգամ այցելէ զչրջակայ գիւղորայսն իւրոյ թեմին և իւրաքանչիւր եկեղեցում օրական եօթն անգամ քարոզ կարդայ։

Աստղագէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ
Փարեմուզ

ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

I

Սիրեցեալ մեր ազգ
Հաուց.

Ի մէջ բազում և պէս-պէս հիմնարկութեանց քոց տակաւին չէ եղեալ զուեիզիա. թէև յանցեալում, նուազ մի զտէր Մատթէոս վարդապետն յընթացս վեց ամսոց զուեիզիայս կատարեալ էր ի Թիֆլիզ և գհետևանաց մասին լռեալ։

Արդ՝ ունեալ ի նկատի, թէ՝ յաժմ զամենայն տեղիօք զուեիզիա լինի սենատորական և բազում բազում պատուական պաշտօնեայք երբեմն սևերես մընան և երբեմն էլ դեղնեն ի պատճառս գործոց իւրեանց, վասն այսորիկ բարուոք համարեցաք, զի և մեք՝ կարգադրեսջիք զուեիզիա կատարել մերս ազգային գործչաց գործոց։

Ուստի

Պատուիրելով պատուիրեմք ում և անկնէ, զեկուցել զամենն զոր և ինչ գիտեն ի մասին ազգային դրամոց։

II

Մեծարելի պ.
Մակար Զմշկեան.

Բեղմնաւոր գործունէութիւն Ձեր յասպարիզի ուղղութեան հողմերի, ձիւնախառն բքերի և այլն, ամենեցունց յայտնի է։ Վասն այսորիկ պարգևատրիմք զԲեզ զմեղալիւ վասն կախելոյ ի վերայ մէջքին ձեր. ընդամին պատուիրեմք համբառնալ յեթերս, և անդ կարկատել զպատառոտեալ ամպերս, այնուհետև, կարկատեալ ամպերն տանել և ի վերայ հարկաւոր վայրից անձրևացնել։

Զկատարմանէն պատուիրեմք զեկուցել մեզ։

Խաբաբալա ամենայն հայոց՝
Դասպար Կալաֆուզով

ԿԻՍԱՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԺԱՄԱՆԵՑԻՆ

—

Գանձակից տպագրելով և իր սեփական աէրօպլանով Թիֆլիս է հասել մեր աշխատակից Մոծակը։

—

Երեւանից նոյնպէս կը հասնէ Կլան Ցակոբը։

—

Անցեալ օրը Թիֆլիս էր ժամանել մեծարելի Ղալայչի Մարգարը, Ղարսի մեր ժեներալը։

—

ԿՐԿԻՆ ԺԱՄԱՆԵՑԻՆ

Բալախանից Թիֆլիս և ճեպընթաց հե-

ეროვნული ბიბლიოთეკა

ախոսով ժամանց տեղւոն խաթարախտների տնօրէն՝ տէր Խորէն Ժան-դը-Բուլ։

—

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

«Խաթաբալի» դիւանագիտական շրջաններում ասում են, իսկ կողմանոցներում պատմում, որ վերև յիշած խաթաբալխաների Թիֆլիս գալը կապ ունի արտաքին և ներքին համաշխարհային հարցերի հետ։

—

Գանձակի Մոծակը, ինչպէս յայտնում են, դէմ է ռուս Թրքական ընդհարման թէև դէմ չէր, որպէսզի Հալէի գիսաստղը ընդհարւէր մեր մայր երկրագնդի հետ։

Նա այս մասին առանձին կարծիքներ ունի, որը շուտով լոյս կըտեսնի անգլիական «դեղին գրքում»։

Երևանից Կլան-Ցակոբը, ինչպէս պատմում են, ժամանում է Թիֆլիս և ուզում է Պարսկաստանի կառավարութեան ղեկը իր ձեռքը առնել։ Գասպար Կալատուզեանը այդ քայլը աննպատակ է համարում, պատճառաբանելով, որ Պարսկաստանում ոչ մի նոր գործ կատարել չի լինի՝ համաձայն գոյութիւն ունեցող և չունեցող օրէնքների։

Եզով ծայրայեղ վարդապետը այլ կարծիք ունի նոյն գործի առթիւ—իսկ Գեօզալ Աղաբաջին, որն իր կարծիքը և դիտողութիւնները ճեպընթաց հեռագրով է յայտաբարել—գալիս է ասելու, որ արտաքին քաղաքականութեան մէջ կարիք կըլինի այլ դիրք բռնելու։

Մեծարելի Ղալայչի Մարգարի տեսանելի գալուն և անտեսանելի մեկնման քաղաքական մեծ նշանակութիւն են տալիս։

«Խաթաբալայի» կողմանոցներում շատ են խօսում և այն չխրթմայի մասին, որ կերւել է Շիրվանզադէի յոբելեանի երկրորդ օրը։

Այս երևոյթը կարող է բուխարա-խիվայական ընդհարում առաջացնել։

Սպասում են վերջին լուրերի։

—

Գերապատիւ Խորէն դը Ժան-Բուլի և բուլբուլի կարծիքները քաղական հարցերի մասին, կըհաղորդենք յետագայում։

ՎԻՐՉՈՒԹՈՒՂ...

Էն օրը իմ մահի վրէն բան էի գըրում։ ուզում էի ձիգ առաջուց ասի թէ՝ վուր Գասպար Կալատուզովը մեռնի՝ ո՞վ ի՞նչ կօնէ, ով ինչ թաւուր ան լաց կուլի, ան վէնօկ (պսակ) կու դնի, ան տելեգրաֆ, ան դէպէշ, ան «պատկամաւոր» կուղրկէ թաղմանը։

Շիրվանզադէի օբիլը էկաւ պլաններս մօղլա արաւ. կցեցի գրել նրա՝ Շիրվանցի Մինաս զադէի կենսագրութինը՝ ափալ մափալը ու իմ մահը կի մոէս հանեցի։

Հիմի փիքր իմ անում, ու տեհնում վուր ջէր չիմ մեռնում, ու էդու համա հիմիկւանից ինչի իմ ջափա քաշում, գլուխս տրաքեցնում. էս մէկ, վրայ էրկուսն էլ էն վուր՝ էգեբա էդ բոլոր պատկամաւորները խմբակցութինները ուփրո շուտ ին մեռնում քանց թու իս, մէկէլ էն, վուր՝ հիմի իս վուր գրիմ, դրանք վիկալնէն, ու իրանց համա էլ էտինց ցերիմոնիյ անին—էտ չախն էլ իմ մեռնիլը էլ ի՞նչ լազաթ. էս բոլոր բանիրը, էս ամէն փիքրիրը գլխումս վուր էկան՝ հիմի վճռել իմ էլ չմեռնիմ։

Հա ու հա՜։

Ի՞նչի իմ մեռնում։

Հիմի մարթիք դոխտրներու կուշտ ին գնում, փուղ ին խարջում, վուր լաւնան մէ էրկու օր աւել ապրէն. իս էնա ապրում իմ ու ապրում. դոխտուրներուն չիմ աւտում, չիմ էլ հետնիրը խօսում։

Դոխտուրնիրը ի՞նչ ին է։

Աբա մէ մարթու իսկի կինք տւիլ ի՞ն, աբա մէ մարթու ապրցրիլ ի՞ն։

Էնա, վուխտը՝ Միքէլ-Գաբրիէլը, վուր գալիս է, էդի վունց դոխտուրն է ոտկում, վունց էլ մոխտուրը։

Թուրմէ դոխտուրները իրինք էլ ին մեռնում։

Մա՜շ։

Էդկի չէ ու մի բան պտիմ հարցնի։ Հիմի միր քաղքում, պետլած Թիֆլիզում եկել ին, ասում ին. էն մէկէլ քաղաքներից, Կաւկազի գորոդներից խալխ, ու գուղին, կօսէ, վուր խօլվէրի բունը գթնի, կօսէ։ ուզում ին, կօսէ, խօլվէրին իր բնի մէչ խիղտի, կօսէ։

Ղոչաղ տղերք։

Բաւ բանիր ին փիքր անում մ՜յ։

Միր գոլովէն՝ Ալէքսանդրէ Խատիսովը չումի դէմ գնացող ղոչունի ղերենալն է։

Մկներ է ջարթում։

Մկնիր է ջարթիլ տալի։

Երևնի գոլովէն, պարուն Տիգրանովին էլ խօլերի ղերէնալի չին ինք տալիս։

Աբա տեհնինք՝ թէ դրանցմէն ով ուփրո ղոչաղ կուլի։

Խօլվերէն էլ ասում ին ղոչաղն է էլի։

Խալխի փորներումն է մտի ու էնղանց դուս չի գալի, կօսէ։

Լաւ էլ է անում։

Աչքն էլ է հանում։

Խալխը ինչ տեհնում է՝ փորն է ածում, խօլվերէն էդ վուր տեհնում է, ասում է՝ իս էլ մտնիմ, տեհնիմ թէ էդ փորը, կօսէ, ի՞նչ թաւուր տիղ է, կօսէ, վուր ո՞վ ասիս ու ինչ ասիս էդի ին ածում, կօսէ, հալբաթաա էտի՝ փորումը մէ լաւ բան կայ, կօսէ, վուր էտինց է, կօսէ, ու մտնում է։

Փոր էլ կայ, փոր էլ կայ։

Փոր կայ վուր ինքը խօլվերա է ու խօլվերից էլ բէթար է։

Ու խօլվերէն էնենց է վախում էդ փորերը, վունց վուր միր դուրձիչները «Խաթաբալի» մաթրախներիցը։

Համա փոր էլ կայ, վուր խօլվէրի անումը լսելիս — աղաքը հեստի է կանգնում, չեստ բռնած, վունց վուր գորոդովոյ ղեներլի աղաքը։

Էտինց էլ է ըլում։

Էտ էլ կի չէ ու մէ բան էլ ասիմ, ասում ին, միթոմ, թէ միր Էդիշէ Մուրադովը հայր սուփր դուդէ, կօսէ, վուր Մախաթի սարի գլխից ջուր դուս բերէ, կօսէ, ու քաղքի հողերը ջրէ, կօսէ. սա, թէ վուր լաւ փիքր անինք. լաւ բան է մ՜յ։

Կուլի էլ վուր Մախաթի սարեմէն էլ Մամա-Դաւթի վերևեմէն էլ ջուր դուս գայ։

Պարուն Եղիշէն ասում է, աշխարքս էնենց է ստեղծած, կօսէ, վուր ամեն տիղ ջուր կայ, կօսէ։ Բաս Աստուձը, կօսէ, անջուր տիղ կու թողնէ՞ր, կօսէ։

Ա՜յ էսինց բանիր է ասում։

Խիլքի մօդիկ բան է, տեհնում իմ. մ՜յ վերցնինք մինք միր գլխնիրը, ուփրո քաշալ գլխնիրը, վուր քրտնում ինք՝ գլուխները չի թռչո՞ւմ, ճակտին բաբթին ջուր չի ըլո՞ւմ։

Քրտինքը ծօրօ-ծօրօ չի դեվիր գալի՞։

Էտ է էլի։

Թէկի մարթու՝ մէ կոմբոստյի տօլ, մէ դօգրի թաւուր գլխից ջուր է ըլո՞ւմ. բաս Աստուձ կու խռովի ու Մամա-Դաւթի սարի ան Մախաթի գլխներից ջուր չի դուրս գա՞յ։

Էտ բանը կուլի։

Միր զօրութինիցը ինչեր ասիս չի ըլի՜։

Գասպար Կալատուզով

——----»»»:::():::«««----——



Աա... սրանք են... սրանք են, որ Նպաստամատույցի մասին հարցումներ են տալիս. լաւ... այնպէս մի ցեխոտեմ, որ տան ճամփէն չգտնեն։



Ընտանիքում

—Ա՛յ կնիկ, ասում եմ, թելքի եկ, ինձ համբերութիւնից մի հանի, թէ չէ՝ Աստուած է վկայ, կերթամ «Մշակի» խմբագրատուն կրցյանեմ՝ որ կաթողիկոսական յարմար թեկնածու եմ, և այն ժամանակ տես թէ դրութիւնդ ինչ կլինի, նոյնիսկ ապահովդան չեմ տալ։



Քալանթարը կաթողիկոսակ. հարցի առթիւ.

—Դիտէք, ես դէմ չեմ ոչ Օրմանեանին, ոչ Սուրէնեանին և ոչ մի այլ եպիսկոպոսի. դրանք բոլորն էլ լաւ են—երբ վատ չեն. սակայն պէտք է դիտենալ, որոշ ընորոշ հարցեր, ահա այդ հարցերը մեզ ասում են, որ մենք չենք կարող չասել և չենք էլ կարող ասել։

ՑՈՒՅՑԵՏԵՍՐԻՑ ԸՆԿԻՐՆԵՐԻՑ

«909» նոր գիւտ։ Կաթողիկոսական ֆիասկո։ Արտիստուհի Մ-Մ. Բըժանի նամակը նուաստիս։ Մի հատած դեկադենտ բանաստեղծների «Սուտերի գրքից»։

—o—

Այն օրւանից երբ Էհրլիխ և Հատա գտան իրենց «606» դարմանը վատ ցաւի դէմ, իմ մէջ խօսեց իմ հրէշաւոր նախանձն ու մարդասիրութեան անչափ զգացմունքը. ես էլ մտածեցի գտնել քաղցածութեան դէմ մի ջախջախիչ միջոց, փրկել միլիոնաւոր մարդկութիւնը սով գազանի ճանկերից ու դաղարեցնել համաշխարհային խուճապը դէպի անտի աշխարհը կամ Ամերիկա։

Բաղմած Բլէրիոյի մօնօպլանին, սլացայ դէպի Ոլիմպիա, ասուածներից խորհուրդ առայ և ապա մասն առայ Արկադիայի անմահիկ զովերից, Եդէմի ջրերից, Լիբանանի ծաղիկներից, Սահարայի ովազիսներից, Մասիսի հողից ու ցողից, Էջմիածնի խցերում ծախսուող մետաքսէ մօրէների թօփերից, հայ հեղինակների՝ գրախանութների դարակներում դարսուած անձեռնամխելի գրքերի փոշիներից, վաշխառու աղանների մուրհակների տոկոսներից, հայ հարուստների կտակներից, կանանց նորաձև գդակներից, ինքնասպանների հոգիներից... մասէն առայնաև տէրտէրների ատաճների ամրութիւնից ու ստամոքսների լայնութիւնից, նորելուկ գրողների յիմարութիւններից, փաստաբանական ստերից, խմբագրական ուշունցներից, սկսելով խեղճաձներից, Պուրիշկևիչի ապականուած ուղեղից... և ապա սկսեցի գործնականապէս տքնել իմ առանձնասենեակում, կատարելագործելու և լոյս աշխարհ հանելու իմ նոր գիւտը՝ «909»։ Այն ժամանակ երբ Ֆրանսիայում—Պաստեօրի ինստիտուտում—Լանդշտէյները և Լևադիտը դեռ կապիկների վրայ էին քութէշի պատուաստման փորձերը կատարում, ես արդէն մի քանի քաղցած, թոկից փախած ադամորդիների գանգերում ներսրբսկեցի իմ գտած «909» դարմանը և չէք կարող երևակայել, թէ որպիսի բարեյաջող հետևանքներ ունեցան։

Այսօր արդէն նրանք տասնեակ հազարների տէր աւանտիւրիստներ են, որ քրքջում են կեանքից լիացած, խոշոր հօնորարներով աշխատակցում այս կամ այն օտարազգի լիբերալ թերթերին ու միանգամայն մոռացել են իրանց վերստեղծող պրոֆեսսորին (այսինքն ինձ), որը ասկետիկ կեանքի մէջ քարացած, բաւականանում է «Խաթաբալա»-ի—մի հայ երգիծաթերթի ինչին տողավարձով։

Ինչևիցէ...

Ես կատարելապէս զուրկ լինելով այլ հնարագէտներին յատուկ շահամոլութիւնից ու գաղտնապահութիւնից, ահա հրապարակով յայտնում եմ իմ նոր գիւտի «909» դարմանի բաղադրութիւնը—

1. Լուծողական.
2. Դաղձ.
3. Քուն.
4. Նիցշէ և Շոպէրներ.
5. Ծաղիկներ և Շօպէնի թախծոտ մելոդիաներից.
6. Սատանայի ուղեղ.
7. Եզի քրտինք.
8. Դէմքի մեծութեամբ թիթեղ

Ցիշեալ «909»-ով, (բացառութեամբ անյայտութեան մէջ մեռնող հպարտ ու ըմբոստ հոգիների և հայ գործիչների) բժշկում են բոլոր ուղեղով ու ստամոքսով քաղցածները։

Փորձեցէք.

—

Գրական հրապարակը սկսում է աղմկել, կաթողիկոսական ընտրութեան շուրջը պտտուող թեր և դէմ կարծիքներից։ Ամենից շատ շաղակրատողը հանդիսանում է «Հովիտ»-ը։ Ահա մի քանի ամիս է, որ այդ թերթը ազատ ու անպատիժ, ինչ ասէք շպրտում է դէպի մեծ երդչի, իսկական հայի—պատկառելի Խրիմեանի և ինտրիգների զոհ՝ Իզմիրլեանի դերեզմանները ու ջատագովում Գէորգ և Մակար կաթողիկոսներին։

Այս այսպէս լինելուց յետոյ՝ ինչ պատկառանքով վաղը, հայ ժողովուրդը պիտի մօտենայ նորընտիր վեհափառին, մինչ հայ քահանայութիւնը յանձին «Հովիտի» դիսցիպլինայի շրջանակից ցուրս եկած, մէկը միւսի յետևից սևացնում է իւր անցեալ իշխանաւորների դէմքերը։

Գոնէ այդ «Հովիտ»-ը սոցիալիստական թերթերից օրինակ առնէր։

Սակայն Բիսմարկն ասում էր, թէ «մի յիմար բան հերքելու համար հարկաւոր է մի ամբողջ գիրք գրել». ես միտք չունեմ շատ երկարացնել, որովհետև խօսքը դեր-Քրիստոսների մասին է, իսկ նրանց խիստ լաւ ճանաչելու «բախտաւորութիւնն» ունենալով, չեմ ուզում թեթևացնել ինձ։

Առայժմ կասեմ միայն, որ կաթողիկոսական ընտրութեան համար հարկաւոր է նախ խաղաղ ու խելացի խորհրդակցութիւն մամուլի էջերից կամ Մախաթի սարի վրայից—այդ միևնոյն է։ Հրապարակից հեռացնել եպիսկոպոսների անունները, ինչպէս և ջահել-ահելութեան խնդիրը։ Զյուսահատուել և չասել թէ՝ «մարդ չկայ» և ապա հանդիսաւորապէս ընտրել հետևեալ քառանուն ցանկից ում էլ կամենան—

1. Սպանդար Սպանդարեան
2. Դոկ. փիլ. Ս. Թառայեան.
3. Գեղամ վարդապետ Բարաջանեան
4. Գեօղալ Աղաբաջի։

Նոր ընտրեալից առանց այլևայլութեան ստորագրութիւն առնել, որ նա կապրի առնուազն 15 տարի, կըբարեկարգէ դպրոցական գործը, կտայ նոր և մշակուած ինստրուկցիա հայ եկեղեցիների ու քահանայութեան համար, Նոյի տապանի նորոգութիւնը կծրագրէ, որովհետև մօտ է կատաբածն աշխարհի, վերջ կըտայ ամուսնութիւն կամ ամուսնալուծութիւն կոչող «սոցիալական» հիւանդութիւններին, հրմնական կրճատման կենթարկէ տէրտէրների թիւը, չաղ-չաղ կտակներից մի փոքր էլ մասն կըհանէ փորը մէջքիցը կպած հայ գրողին, կրկնամուսնութեան իրաւունք կըտայ այրի երէցներին ու կախտահանէ էջմիածնի «կլիկի» ընդարձակ ճահիճները...

—

Փարիզից, Մ-Մ. Բըժանը գրում է նուաստիս—

«Ցարգելի պ. Մ.

Կովկասի արագիլները մեզ լուրեր են բերում, որ դուք, ողորմած տէր, բուն կատաղութեամբ ոտնակոխում էք եւրոպացի կանանց, գլխաւորապէս պարիզիէնների փայփայած պատիւը. հակակրում էք նրանց ձգտումներն օր սրբազան պայքարը, հուշակելով նրանց ամենայետին անառակ հոգիներ...

Այսօր, մեր գեղագէտ կանանց արտակարգ ժողովում, նախագահութեամբ գրակաղգէտ տ. Ժանետտա Մառնիի, միաձայն վճռեցինք վրէժխնդիր լինել ոչ միայն ձեզանից, այլ և ամբողջ Կովկասից։

Պատուիրեցինք Ռօստանին գրել մի նոր գաղտներգութիւն, իր «Շանտեկլէր» թռչներգութեան տեխնիկայով, Կովկասի կանանց և մասամբ տղամարդկանց բարքերից. ֆարուլան—որ գտնուած է մի ռուսական թերթի քրոնիկայի բաժնում—հետևեալն է.

I գործողութիւն

Զօփուռեանը սիրում է հարուստ օրիորդ Զաբօյեանին, Զաբօյեանը սիրում է Վազվազեանին ու Մազմազեանին. Զօփուռեանը հալածում է վերջիններին և վանելով դաւաճան Զաբօյեանի կայքն ու կարողութիւնը փախչում է Զինումաչին։

II գործողութիւն

Զաբօյեանը ծնում է մի զոչ-զաւակ, որին կնքահայր է անում իր քրոջ սիրահար Պիպինեանին. Պիպինեանից էլ ունենում է մի այլ զաւակ, որին կնքահայր է անում Ճիպինեանին— վերջինից էլ մի այլ զաւակ է ունենում, որին կնքահայր է անում Ճիպինեանի եղբօրը, ապա հօրը և վերջապէս անօրը։

III գործողութիւն

Փախած Զօփուռեանը և իր նոր կենընկերուհի Ղօփուռեանը ունենում են մի զոչ-որդի, որը Կովկաս գնալով սիրահարւում է Զաբօյեանի դստեր հետ և երբ Զօփուռեանն էլ գալիս է Կովկաս՝ մարելու իր որդու մեղաւոր սէրը, ինքն էլ սխալմամբ հրապուրւում է և սկսում է ապրել Զաբօյեանի քրոջ հետ... և... և վերջապէս այդ անասունները—ամենքն էլ մեռնում են, մինչև վերջ այն համոզմունքն ունենալով թէ՝ իրենք արևելեան նահապետական սրբական յարկերի տակ են ապրել, սրբազան

կարգերով, հեռու եւրոպական մոլութիւններից...

Կանխապէս այս տրագի-կոմեդիայի մասին ձեզ յայտնելը, սոսկ իմ արտիստական քմահաճոյքն է։

Յարգանքներով՝ M-м Րըժան։

—

Անշուշտ հետաքրքրական կըլինի հետեւեալ հատուածը, որն առաջ եմ բերում դեկադենտ բանաստեղծների «Սուտերի գրքից»։

ԻՄ ՄԱՀԸ

Ես պառկած էի դագաղում.

Ու շուրջս առկայծում էին մահու կերոնների պաղ ու Թափանցիկ լոյսերը, մունջ մենարանիս տքնող օդի մէջ, խունկ ու կնդրուկի հոյակապ ծուխն էր լողում ու շուրջս բազում դեղին աչերից կապոյտ արցունքներ էին կայլակում. ես պառկած էի անուշ դագաղում։

Ու կրծքիս ցանուած սեւ շուշանների, կապոյտ վարդերի, շագանակագոյն մանուշակների մէջ, մեռած էր սիրտս մահի հարուածից ու պաղ ոտերիս խեղճ եղունգները, աշխարհից խռով, բողոքում էին խենԹացած երկնքին...

Երբ սեւ արեւը կանգ առաւ զենիԹում ու ոչնչութեան շարականը սուլեց, կակուղ հառաչներով, եղնիկի հեկեկանքով ինձ դուրս բերին փողոց—ցուրտ արեւի տակ.

Դէպի գերեզմա՜ն...

Ու ինձ իջեցրին որդերի ցուրտ ու մուԹ հայրենիքը, ուր ոչ երկինք կայ, ոչ երգ ու ծաղիկ, ոչ հաց ու պանիր... եւ ինձ Թաղեցին ու գնացին, կարօտ Թողնելով անշարժութեան մէջ ու բոցոտ անծրեւն էր լոկ կենդանութեան աշխարհից չքնաղ բարեւներ բերում հանգչողիս...

Ու երբ վերջապէս դագաղս փտեց ու շուրջս յամառ սողսողուն խենԹ ճիճուները կերան աչքերս ու մարմնիս ամե՜ն ամե՜ն մասերը... գլխիս մազերը...

Ինձ այն ժամանակ Թւաց, Թէ արդէն մեռնում եմ իրօք...

Մեռնում ե՜մ.,. այո՜... զԹացէ՜ք, օգնեցէ՜ք... Ա՜խ... էհէ՜յ... հայ-հո՜ւյ...

Մարիկ

ՀՆԱՐԱԳԷՏ ԱՄՈՒՍԻՆԸ

—

Վճռելով ամուսնանալ՝ ծերունի Մոծակեանը մտքում իրեն հարսնացու ընտրեց բոլորովին դեռահաս և շատ սիրուն մի օրիորդ։ Այդ իմանալով բարեկամներից մէկն ասաւ նրան.

—Այդ ի՞նչ տարօրինակ որոշում ես կայացրել։ Ամուսնանո՜ւմ, և այն էլ ջահէ՜լի հետ։

—Է՜, ի՞նչ կայ որ։ Իմ կարծիքով եԹէ ամուսնանում ես՝ ամուսնացիր միայն ջահէլի հետ,—պատասխանեց Մոծակեանը։—Ամենախելացի բանն այդ է։

—Ամենախելացի՞, ասում ես։ Ճշմարիտն ասած, չեմ հասկանում...

—Անկասկած, ջահէլի հետ ամուսնանալն աւելի խելացի է. ջահէլ հարսնացուներ միշտ աւելի շատ են լինում, քան հասակաւորներ, այնպէս չէ՞։

--Այո, այդ ճիշդ է, [illegible] լինում...։

—Հետեւապէս ջահէլների միջից աւելի յաջող ընտրութիւն կարելի է անել։ Իսկ հասակաւորները մեծ մասամբ այրիներ են, և բացի այն՝ որ տարիքով մեծ են, նրանց միջից շատ անգամ հնարաւորութիւն չի լինում ցանկացածիդ պէսին ընտրել։

Շատ չանցած Մոծակեանը առաջարկութիւն արաւ իր ընտրած հարսնացուին։

—Օրիորդ Հեղինէ,—ասաց նա,—ի՞նչ կը պատասխանէիք, եԹէ ես առաջարկէի ձեզ իմ ամուսինը դառնալ։

Օրիորդը՝ որ վաղուց սպասում էր այդ հարցին, իր «պատուելի» փեսացուին հետեւեալ նկատողութիւնն արաւ։

—Բայց պ. Գարեգին, այդ առաջարկութիւնն անելով՝ մտածե՞լ էք ձեր և իմ հասակի մասին։

--Մտածել եմ... նոյն իսկ երկար մտածել եմ։

—Մեր տարիքի մէջ այնպիսի՜ տարբերութիւն կայ,—շարունակեց նէ.—դուք արդէն վաԹսունին մօտ էք, իսկ իմ տասնութ տարիս դեռ նոր լրացաւ...։

—Չարժէ դրա մասին խօսել անգամ, օր. Հեղինէ։ Դուք միշտ կարող էք աւելացնել ձեր տարիքը, իսկ ես միշտ կըպակսեցնեմ... Այդպիսով տարբերութիւնն այլեւս աչքի չի ընկնի։

Պարզ էր՝ Մոծակեանը հնարագէտ ծերուկ էր եղել, և օրիորդին այդ մինչև իսկ դուր եկաւ, որովհետև եԹէ փեսացուից չէր կարելի պահանջել երիտասարդութիւն, գոնէ պէտք է յիմար չլինէր նա։

—Բայց Թերևս յետոյ դուք խանդո՞տ

ՖԵԼԻԷՏՕՆ

ՊԱՐՈՎԱԿԻՐ ԲԱՔՈՒԱՆ

«ԿԱՐՄԻՐ ՍԵՆԵԱԿ»-ներից *)

(Շարունակութիւն)

Սահաթի 12-ը կոփալ էր, տիւղնը սիրտս քինամ էր, մին բիչ կեարմուր լօբի կար, կծուն կտորեցի վերայ, աղ, տաղտեղ արի, պասւան եղ ածեցի մին քուշտ կերայ, ետով ալ չայնիգը ճիւր ածեցի, մաշինը վառեցի տիրի վերայ, որ չայ խմամ։

Սաշա-լօԹիկս Թուղթերը Թափեցի առաջս, ասեցի տեսնամ մէչին հինչ կայ կիրած։ Կաշիի մէծ պորտմանը պեացեցի, մէչին կար մի հարուր իրեք քսան տասնը չորս մանէԹ փող. երկու վեքսիլի Թուղթեր, վեց դանա նամակներ փագեԹի մէչին։ Նամակներան երեքը հայերան պարովակիր էր, կարԹեցի, աչկերս պեաց Թնաց։ Ըս պարովակիրան մինը մի ախչիգ էր կիրալ, մինը մին կնիգ, մինն ալ իրան, հէանց Սաշի կնիգը։

Ձիւնքի «ԽաԹաբալի» խաԹաբալա-կարԹացողները աԹանց նամակներ շատ ան սիրիմ. ես աս իրեք պարովակիրն ալ քիցիմ ամ «ԽաԹաբալի» մէչ։

Սիրելի՛ Սաշա

«Եղբայրս, կարծես, ամեն ինչ հասկացել է, բայց ի հարկէ լռութիւն է պահում, որքան էլ լինի եղբայրս է, ես էլ նրա քոյրը. լռութեան պատճառը, իմ կարծիքով, այն է, որ տէգրս չիմանայ, Թէ չէ վատ հետեւանքներ կունենայ։ Եղբայրս մօրս արդէն յայտնել է մեր գաղտնի յարաբերութեան մասին, մայրս ինձ ասաց և խորհուրդ տւեց, որ շատ զգոյշ լինեմ, որպէսզի սկեսուրս և տէգրս կամ ամուսնուս ազգականները այդ չիմանան։

«Մայրս շատ լաւ կին է, ափսոս չը արժանացաւ քո զոքանչը լինելու, նա ասում է ինձ. «աղջիկս, ջահիլ ես, քո սիրելու ժամանակն է, այնքան բաղդաւոր ես, որ ամուսինդ Թուղթ խաղալ շատ է սիրում և գիշերները ուշ է գալիս տուն, իսկ ցերեկներն էլ գործի է լինում. քո քէֆ անելու ժամանակն է, բայց շատ զգոյշ եղիր, ինչպէս քո հայրը իմ գաղտնիքս մինչև մահը չիմացաւ և ամբողջ կարողութիւնը ինձ կտակեց, քո ամուսինդ էլ չպիտի իմանայ. գուցէ նա էլ քեզ կտակէ տները։ Լաւ է, որ դու մէկին ես սիրում, ես ջահիլ ժամանակս չորս սիրական եմ ունեցել»։

«Դէ, տեսնո՞ւմ ես, սիրելի Սաշա, որքա՜ն բարի կին է մայրիկս։

«Աշխատիր եղբօրս շոյել, նա բերանի Թուլութիւն ունի, երբեմն հիւրանոցներում հիւրասիրի, իսկ տէգրս խմող է, գարեջրի համար հոգի կտայ։

«Վաղը, ժամի 10-ին կըսպասեմ, տանը բացի ինձանից ուրիշը չէ լինելու, ես ինձ հիւանդ կըձևացնեմ և տնիցը չեմ դուրս գալ։

«Կնոջդ եկեղեցում տեսայ, ինձ հետ բարեւեց, շատ միամիտ կին է, խեղճը բաւական նիհարել է։

«Հազար համբոյրներ քեզ. քո

Հռիփսիմէ

—

Երկուինջի պարովակիրը մին ախչիգ էր կիրալ։

Պարոն Ալէքսանդր Դողկըզօվիչ!

«Մինաս Մինասիչի աղջկան հարսանիքի գիշերը խոստացար համոզել քրոջդ որդուն —իմ սիրունիկ Միշայիս, որ ինձ հետ ա-

---

*) Տես «ԽաԹ.» № 21.

ეროვნული ბიბლიოთეკა

գտնուէք իմ վերաբերմամբ,—ասաց նէ։

—Ե՞ս։ Խանդո՞տ։ Օ՛, ո՛չ։ Ի՞նչ կարիք կայ խանդոտ լինելու։ Ի հարկէ ես ստիպուած կըլինիմ բոլոր միջոցները ձեռք առնել ամուսնական պատիւս պաշտպանելու համար, բայց խանդո՞տ լինել… երբէք այդ ինձ թոյլ չեմ տայ։

Այս խօսքերը այնպիսի մի համոզիչ եղանակով արտասանեցան, որ օրիորդն իսկապէս հաւատաց, թէ Մոծակեանը խանդոտ չպիտի գտնուի իր վերաբերմամբ։

Բայց նրա ուշադրութիւնից վրիպեցին Մոծակեանի այն խօսքերը թէ՝ բոլոր միջոցները պիտի ձեռք առնի իր պատիւը պաշտպանելու համար։ Այն ինչ ողջ էութիւնը հէնց դրա մէջն էր, որ կար.

Արդէն հարսանիքի հետեւեալ առաւօտը, երբ Հեղինէն՝ վարդագոյն լայնազգեստը հագին, մօտեցաւ պատուհանին՝ Մոծակեանը քնքշաբար ասաց.

—Հեղինէ, սիրելիս, հեռացի՛ր, այդտեղից… պատուհանի մօտ մի՛ կանգնիր։

—Ինչո՞ւ։ Պատուհանից քամի հօ չէ թափանցում…։

—Գիտեմ որ քամի չկայ։ Այդ էր պակաս. որ քամին թափանցէր, մինչդեռ ես այնպէս զգուշանում եմ մրսելուց։ Ամուսնանալուց առաջ ես պատուիրեցի նորոգել բոլոր պատուհանները։ Այժմ մանաւանդ պիտի պահպանեմ առողջութիւնս մեր ապագայ սերնդի համար։

—Ինչո՞ւ ուրեմն արգելում էք ինձ կանգնել պատուհանի մօտ։

—Որովհետեւ փողոցը շատ նեղ է, իսկ դիմացի տանը բնակւում են ուսանողներ…

—Կընշանակէ դուք արդէն խանդոտ էք։

—Ամենեւի՛ն։ Ի՞նչ կարիք կայ խանդոտ լինելու։ Բայց չէ՞ որ ես պիտի միջոցներ ձեռք առնեմ իմ ամուսնական պատիւը պաշտպանելու համար։

—Այստեղ մի՞թէ որեւէ բացայայտ վտանգ սպառնում է ձեր պատուին։

—Բացայա՛յտ,—ո՛չ. բայց կայ աներեւոյթ մի վտանգ, դու նայում ես ուսանողներին, նրանք—քեզ, իսկ յետոյ դժւար չէ եւ ժամադիր լինել անթել հեռագրով… խնդրում եմ, հեռացի՛ր պատուհանից… ես չափազանց ջղային մարդ եմ։

Խանդոտ, եւ ո՛չ թէ ջղային։

--Ճշմարիտ եմ ասում, ո՛չ։ Ես շատ զգոյշ եմ, այո՛, ուստի ես աչալուրջ կերպով հըսկում եմ իմ ամուսնական պատւիս վըրայ, բայց այդ ամենեւին չէ նշանակում՝ թէ ես խանդոտ եմ։ Դու հօ էլ ուրիշ յիմարութիւն չգտա՞ր հնարելու։ «Խանդո՛տ»։ Հա՛-հա՛։ Ծիծաղելի է մինչեւ անգամ։

Մի երկու օրից յետոյ Հեղինէն մի նամակ ստացաւ մէկից եւ այդ պատահեց ամուսնու ներկայութեամբ։

—Հեղինէ, ումի՞ց է այդ նամակը։

—Թոյլ կըտա՞ք չասել ձեզ այդ։

Մոծակեանը մինչեւ իսկ վեր թռաւ տեղից եւ բացականչեց ջղաձգաբար.

—Ո՛չ, թոյլ չեմ տալ… Դուք պարտաւոր էք ասելու։ Հեղինէ, այդ նամակը ումի՞ց է։

Եւ նա քիչ էր մնում, որ քիթը նամակի մէջ կոխէր, բայց Հեղինէն իսկոյն պահեց այն յետեւին։

—Դուք դարձեալ խանդո՞տ էք։

—Ամենեւի՛ն։ Որպիսի՛ յիմարութիւն։ Ինչո՞ւ պիտի խանդոտ լինեմ։ Բայց չէ՞ որ ես պիտի միջոցներ ձեռք առնեմ ամուսնական պատիւս պաշտպանելու։

—Էլի՛ ձեր այդ միջոցները։ Այդպէս եթէ շարունակէք, ո՞ւր պիտի հասնի այդ։ Մեր կեանքն անտանելի կըդառնայ։ Ես կըգերադասէի, որ դուք խանդոտ լինէիք։

—Ներողութի՛ւն, բայց ի՞նչ պատճառով պիտի խանդոտ լինեմ։ Ես մի ազնիւ եւ զարգացած մարդ եմ, եւ յանկարծ «խանդո՞տ»։

—Ցապա ամուսնական պատիւը պաշտպանելու ձեր այդ, «միջոցները». չէ՞ որ այդ նոյն խանդոտութիւնն է։

—Սխալւում ես, Հեղինէ. չարաչա՛ր սըխալւում ես։ Խանդոտը ամենեւին այսպէս չի լինում…։ Տեսած կա՞ս «Օթելլօ» ողբերգութիւնը։ Օթելլօն կատաղած վագրի նման վազվզում է սենեակում, քաշելով՝ պատռում է իր շապկի օձիքը, փետում է մազերը, գլուխը զարկում է պատին եւ վերջապէս յարձակւելով իր սիրուհու վրայ՝ խեղդում է նրան բարձով։—Ահա՛ թէ ինչ է խանդոտը։

—Օթելլօն խեղդում է բարձով, իսկ դուք կարող էք խեղդել ինձ, այսպէս ասած, բարոյապէս։

—Հեղինէ, ես այլաբանական դարձւածքներ չեմ ընդունում. լուրջ խնդիրները, իմ կարծիքով, պիտի զերծ լինեն դրանցից։

Միով բանիւ, Մոծակեանը կտրականապէս ժխտում էր իր խանդոտ լինելը եւ շարունակում էր հանգիստ կերպով հաւատացնել, թէ ինքը միայն միջոցներ է ձեռք առնում իր ամուսնական պատիւը պաշտպանելու։

Մի անգամ այնպէս պատահեց, որ Մո-

մուսնանայ եւ ես էլ խոստացայ, քեզ հետ ծանօթացնել քեռիս փափլիկ կնոջ հետ։ Ես իմ խոստումս կատարեցի, բայց դու մինչեւ այսօր չես կատարում։ Տղամարդիկ միշտ այդպէս են լինում, միշտ մոռացկոտ, միշտ անտարբեր դէպի ուրիշների ցաւը։

«Վերջին անգամը ձեզ յիշեցնում եմ, որ մտնէք իմ դրութիւնս եւ իմ կեանքը կապէք Միշայիս հետ։ Կըսպասեմ ձեր ուրախ նամակին։

«Մնամ միշտ դէպի ձեզ սիրով՝
Բոզա

Հիմի ալ տի պիմ ամ Սաշա-լօթիիս կընգան կիրած նամակը իրան ամուսնուն։

Սա՛շա

«… Սիրտս տրաքւում է, երեխաները հոգիս հանում են, գիշերները մինչեւ ժամի 12-ը անքուն նստում են, թէ «հայրիկը պիտի գայ, մրգեղէն բերի», բայց դու, հայրիկդ, ինձ աչքաթող ես արել բաւական չէ, զաւակներիդ էլ ես մոռացել։ Ուղիղ հինգ օր հինգ գիշեր է, ոչ ես եմ կարողանում քեզ տեսնել, ոչ էլ երեխաները։ Գիշերը, լուսաբացին մօտ գալիս ես, 1—2 ժամ հանգստանում, էլի գնում կամ Սեւ-քաղաք, կամ Բայիլ. իսկ երկու գիշեր բոլորովին չես էլ եկել, այլ հեռախօսով յայտնել ես, որ հրաւիրուած ես հիւր…

«Ախր, Սաշա, ոչ այդպէս ծնող կըլինեն, ոչ էլ ամուսին, Երեխաների հայրը, կարծես, խոհարարն է, նա է, հարցնում, թէ երեխանե՛ր, ի՞նչ առնեմ ձեզ համար…

«Ի՞նչ պատասխան տիտի տաս նրանց, եթէ նրանք մեծանան եւ քո շռայլ կեանքը հասկանան… Միթէ՞ նրանք հայրական յարգանքով կըմօտենան քեզ։

«Սաշա՛, բաւական է, որքան շռայլ կեանք վարեցիր, բաւական է, որքան կեանքդ փչացրիր, խնայի՛ր չորս մատաղ մանուկներիդ, խնայիր ինձ, արդէն թոքախտի նշաններ են երեւում։ Ինձ երեխաներն են ապրեցնում, նրանց եմ խղճում, այլապէս մահը գերադասելի է, քան այդպէս ապրելը…

«Երեւակայի՛ր, ինչպի՛սի ամուսին եւ ծնող ես, որ հինգ օր չեմ կարողանում տեսնել եւ ստիպուած եմ լինում քաղաքային պօստով նամակս գրել…

«Քեզ թողնում եմ քո խղճին, ես թոքերի բորբոքումով գերեզման կըմտնեմ, բայց մանրիկ երեխաների տանջանքը քեզ ճանապարհ չի տալ, յաւիտենական տանջանքի ենթակայ կըլինես…

Քո դժբախտ կին՝ Սօֆիա

—

Առօօտը քնատեղաս վերկացայ, շորերս կեցեցի, մի մեծ շալ ալ կլխիս քցեցի դիւզ քինացի Սաշանց տուն։

Իրեք նամակներն ալ, վէքսիլներն ալ մի փագեթի մէչին տիրի, վերայ կիրեցի Սօֆիայի անըմը։ Դուռնիգին կանչեցի քիչայ, թուղթերը տւի, ասեցի տար տուր Սօֆիա խանըմին, Սաշին չտաս, լափ խանըմի ցէքը տուր։

—Աստուծ եօխ անի Սաշին,—ասեց դըռնիգը, Սաշան տանը եր ա ընկնըմ, որ նրան թուղթ տամ, հարուր թագի իլի Սաշին տեսնիլ չի կարալ։

Դուռնիգը թուղթերը տարաւ, ես մին բաշ դաբանիս եղ քիսած եկայ մեր տուն։

Եքուցան ալի քինալու ամ «Կարմիր սենեակների» քամագան, տեսնամ աթանց տեղեր քանի՞նը կայ։ Աս սաֆար կեցուլի ամ Ղարաբաղի այանի շորեր, որ չի ճնանչան։

Մնամ քեզ թամարզու քու քիւրացու՝
Գեօզալ Աղաբաջի

ծակեանին հարկ եղաւ մի շաբաթով հեռանալ քաղաքից։ Մեկնելուց առաջ նա մի քանի օր խիստ զբաղուած էր ինչ-որ խորհրդաւոր պատրաստութիւններով։

Թէ ինչ պատրաստութիւններ էին դրանք, Հեղինէն ամենևին տեղեկութիւն չունէր։ Բայց յետոյ պարզւեց, որ այդ բոլորը նպատակ ունէր՝ նախապատրաստելու միջոցներ ամուսնական պատւի պաշտպանութեան համար։

(Կըշարունակւի)

Մ.. Ե.

ՀԱՇԻՒ

«Ցոյս», «բոյս». «կոյս» և այլ որբերին, խեղճերին, կենդանիներին խնամող և լուսաւորող ընկերութեանց։

Բնակարանի վարձ—30 ր., յօբելեարին նւէր—28 ր., դասագրքեր—13 ր. 40 կ., ուղերձ յօբելեարուհուն—15 ր., կառքի փող—80 կ., նախաճաշիկ երեխաներին—7 ր. 26 կ., նւէր յօբելեարուհուն—21 ր. 80կ., կառքի փող—1 ր. 10 կ., նպաստ խեղճերին—4 ր. 15 կ., ուղերձ յօբելեարին—14 ր. 40 կ., կառքի փող—90 կ., հաշիւը տպագրելու—12 ր. 70 կ., կառքի փող—1 ր. 20 կ.։ Ընդամենը 150 ր 71 կ.։

Հաշիւը ճիշտ է՝

Նախագահ՝...եանց
Փոխ Նախագահ՝...եանց
Վարչութեան անդամներ՝...եանց
...եանց
...եանց
...եանց
Քարտուղար՝...եանց
Գանձապահ՝...եանց
Վերաստուգ. մասնաժ. անդամներ՝...եանց
...եանց
...եանց

Ստուգեց Ճանճ

ԲՌՆԻԵՑԱ՛Ի

Գուշակիչը.—Ձեր ապագայ ամուսինը պիտի լինի բարձրահասակ, թխահեր և շատ հարուստ։

Տիկինը.—Անչափ ուրախ եմ... բայց նախ խորհուրդ տւեցէք՝ թէ ինչ կերպ ազատւեմ այժմեան ամուսնուցս։

ԷՆՑԻԿԼՕՊԵԴԻԱ

(Տե՛ս Խաթաբալա № 20)

Ե.

Ե. տառը, ինչպէս ապացուցում է Ղազ. Աղայեանը հայերէն այբբենի 5-րդ տառն է։

Ելեւմտական նախարար.—Առաջ է եկած ել և մուտք բառերից, որ ռուսերէն թարգմանւում է приходъ-расходный министръ.

Եղ կամ եկեղեցական փողեր.—Երկուսն էլ միևնոյն յատկութիւնն ունեն այն է՝ երկուսն էլ հալւում են միայն թէ իւղը՝ կճուճի մէջ, իսկ փողը՝ երէցփոխի գրպանում։

Ելք.—Հաշւապահական տերմին է, որին աւելի վարժւած է Թիֆլիսի ուպրաւան։

Երանի՜.—Բացականչութիւն է, որ աւելի շատ գործ է ածում հայասէր Աբդուլ-Համիդը անցեալները յիշելիս։

Եզակի.—Այս բառը տրւում է գրողների մէջ՝ Գենջեանին, ուսուցիչների մէջ՝ Յ. Միրզաբէգեանին, դերասանների մէջ՝ Արշալոյսին և կանանց մէջ՝ Գեօզալ Աղաբաջին։

Եղանակ.—Առաջ է եկել և յետ գնացել եղ և ակ բառերից, որի ճիշտ բացատրութիւնը խնդրեմ նեղութիւն քաշիր և տես Եփրեմվերդի ԺԲ. գլ. § 22։

Եըրայեցիք.—Գործ է ածւում երջանիկ և արտօնեալ ազգերի համար։

Եթէ.—Պայմանական խօսք է. օրիորդներն ասում են ճրագով փեսացու փնտրելիս։

Ե՞րբ.—Հարցական բառ է, որ Ատրպետը առաջարկում է Նպաստամատոյց յանձնաժողովին, ուսուցիչը՝ հոգաբարձուին, իսկ վերջինս էլ՝ իր գրպանին.

Եւա.—Հիմնադիր տղամարդկանց վզին փաթաթւած տզրուկների և սատանայի հետ առաջին անգամ խորհրդակցող։

Ե՛լ.—Բայ է, որ առաջին անգամ Ս. Թառայեանը ասաց Ղ. Աղայեանին Հորիզոնի «բերդը» ռմբակոծելու ժամանակ։

Երբէ՛ք.—Բացասական մակբայ է, որ Աբամելիք Լազարեանը արտասանում է, երբ նրան հարցնում են, թէ գիւղացիների որդիներին ե՞րբ էք ճեմարան ընդունելու։

Երկաթ.—Սա մի անհանգիստ բառ է, որ երբ մնում է անփոփոխ, հանգստութիւն է տիրում, բայց երբ կ-ն փոխւում է ծ-ի, էլ դողութիւններին և շառլատանութիւններին չափ ու սահման չի լինում։

Էնցիկլօպեդիստ

Փարեմուզ

Նա իրաւացի է

Զրուցողներն են՝ ելեկտրական բժիշկը և մի օրիորդ։

—Ասացէք խնդրեմ, պ. բժիշկ, ձեր մասնագիտութեան մէջ ինչ բան համարւում է ամենագլխաւորը, ամենէն կարևորը, այսպէս ասած՝ հիմնականը։

—Վարձատրութիւն ստանալը։

ՕՐԻՈՐԴԻ ՑՈՒՑԱՏԵՏՐԻՑ

—Այժմեան փեսացուները մի աչքով նայում են մեր կազմւածքի վերին մասերին, իսկ միւսով՝ հայրիկի գրպանին...

—Եթէ մարդիկ մեր մտքերը կարդալ կարողանային, նրանք նրանց անպայման կըհամեմատէին պոռնկագրական վէպի հետ...

—Տղամարդուն կարելի է ճանաչել նրա առաջին տասնեակ համբոյրներից յետոյ միայն...

—Ասում են, որ սէրը իբր թէ բնակւում է սրտի մէջ։ Դա դեռ եւս ստուգութեան կարիք ունի...

Մենք շատ աւելի յիմարութիւններ ենք ասում, քան անում, բայց արի տես, որ թարսի պէս՝ մեզ հէնց վերջինի մէջ են մեղադրում։

—Լաւ կին լինելու համար՝ հարկաւոր է լաւ էլ ամուսին ունենալ։

—Երբ հարս դառնալու լինեմ, կաշխատեմ մինչեւ հարսանիք՝ ամուսնուս ամբողջ կարողութիւնն իմ անւանս շուռ տալ։ Ես զգում եմ, որ հարսանիքից յետոյ այդ ինձ չի յաջողւիլ։

Գրեց՝ օրիորդ Ս.

Համայնացրեց՝ Եզոպ ծայրայեղ վարդապետ

ՀԵՌԱԳԻՐ

(Խաթաբալիստական գործակալութիւնից)

Գանձակ.—Հայ գրական և հասարակական գործիչները (մեռածների հետ միասին) Րէյտէրի գործակալութեան միջոցով հետեւեալ հեռագիրն են ուղղել ինձ։

Գանձակ.—«Խաթա և բալա»-ի «Մոծակ» Եթէ Լէօն 20 տարի անընդհատ Հաջի Համբարձումի հետ միասին մի սեղանի վըրայ յօգուտ... ազգի... գրել են, և բոլոր հայերին «խաւարամտութիւնից» դարձրել են իրենց նման ազատամիտներ՝ մինչ «ծայրայեղութեան» աստիճանը. (ճիշտ սուգ զգեցիր զեկեղեցի Հայաստանեայցին նման)։ Եւ այդքան ժամանակամիջոցում, նա չի կարողացել, «Հաջուն» այնպէս լաւ հասկանալ, որ նրա «գրական» և «հասարակական» գործնէութեան առթիւ գրելիս՝ «փաստերը» չը «կեղծէր» և «դօկումենտների» դէմ մեղանչէր, (Կալատուպը թողութիւն շնորհեսցէ) ու Հաջին դարձնէր Մաշադի.

—Ապա ասա խնդրեմ, «Մոծակ» ջան, ինչ

ეროვნული ბიბლიოთეკა

—Դիօգէն յարմարաւոր ամառանոց չգիտե՞ս, լաւ փող կը վճարինք։

—Իմ տակաւս ամենալաւը եւ յարմարաւոր է, նա էլ ինձ համար է. դուք էլ տակառների մէջ մը-տէք.—դա աւելի լաւ կը լինի։

ეროვნული ბიბლიოთეკა

վիճակի մէջ կարող են լինել՝ մեր մասին գրած «փասաները, դոկումենտները և վաւերագրերը» «Լէօի» «Ռուսահայ գրականութեան» պատմութ. գրքում... Քանի որ շատերս նրա աչքին երևացել ենք «խաւարամիտներ»... և «կղերա-պահպանողներ», իսկ շատերիս հետ էլ նա, երկար ժամանակ, «Մշակ»-ի մէջ տպագրւած իր «Կիրակնօրեայ զրոյցներում» «գրական և գաղափարական» պօլեմիկա է մղել այնպէս, ինչպէս «Հորիզոն»-ի 105 №-ի մէջ գրած՝.

«Մշակական ծամածռութիւններ», «գրական բթութիւն», «Մտաւոր թշւառութիւն», «գալարւեցին», «գժւեցին», «ուշաթափւեցին», «արթնացան», «փողոցային մարդ» «մտքի և գրչի անառակութիւն» «Կրիլովի մայմուն», «մտաւոր անառակութիւն» խօսքերով...

Խելքս բան չի կտրում, դիմում եմ Կալատուզի խելքի օգնութեան...

Մոծակ

ՀԵՌԱԳԻՐ

(Ոտով եկած)

Դանձակ.—Շիրվանզադէի լօբելեանի առթիւ կայացած ժողովում թեր և դէմ կարծիքներ լսելուց յետոյ ժողովականները կայացրին հետևեալ որոշումները՝ 1. Որովհետև հեռագրի փող չկայ Շիրվանզադէի 30-ամեայ յօբելեանին Դանձակից հեռագրով շնորհաւորելու համար, ուստի յետաձգւում է մինչև նրա 75-ամեակի լրանալը։ 2. Այն բոլոր հռետորները... որոնք պէտք է 30-ամեայ յօբելեանի առթիւ խօսէին՝ իրենց դասախօսութիւնները կարող են պահել 75-ամեակի համար...

Մոծակ

Մեր ժամանակները

—Հեղինէ, դու բոլորովին անտանելի կերպով ես վարւում տղամարդկանց հետ։

—Ի՞նչպէս, մայրիկ, ես կարծեմ միշտ համեստ եմ պահում ինձ տղամարդկանց մօտ։

—Ահա յաւն հէնց այդ է, որ համեստ ես... Այդպէս շարունակելով երբէք չես կարող մարդու գնալ։

Մ. Ե.

* * *

Մութ ու լուռ է շուրջս...
Դիշերային խաւարը թանձր, անլուսին,
Ինչել երկրին։

Սեռ ու տրտում հոգիս...
Հիասթափութեան հարւածը ինչու ուժգին
Իմ հէր սրտին։

Մութ ու խաւար լուռ գիշերում,
Սիրտս սուզւած վշտի ծովում.
Դեռ չծաղկած, կեանք չտեսած՝—
Մեռնող կեանքի ողբն է հիւսում,

Ցակ. Տէրուճի

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՖՕՐԻԶՄՆԵՐ

—

Որքան մարդիկ, այնքան կարծիքներ։
Ցիցերոն

—

Մարդկանց յարգելու համար պիտի նրանցից հեռու լինել։ Սաֆիր

—

Եթէ կօշիկներդ նեղ են, ապա ինչ օգուտ նրանից, որ աշխարհը լայն-արձակ է։
Թալմասական առած

—

Հաւատարիմ կին, ազնիւ ընկեր, լաւ հարեան և խելօք տալանաթէջի,—ահա բոլորը, ինչ որ հարկաւոր է խաղաղ կեանքի համար։ Կոմս Օստերման

—

Ստութեան վրայ կարելի է նայել որպէս սանդուղքի առաջին աստիճանի վրայ, որը տանում է դէպի բոլոր արատները։
Ս. Դիւրէ.

—

Աշխատանքը կեանք է։ Ամեն ինչ իր ժամանակին արա։
Հիւգօ եւ Պասկալ

—

Ոչ մի թռչնակ թռած բարձրութեան վրայ չէ մնում, այլ կրկին իջնում է։
Հ. Պեստալոցցի

—

Կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեղուի խայթոց. նա ամենից լաւ թաց հողով է բժշկւում։ Սաֆիր

—

Երբէք չեն կարող վերադարձնել կորցրած ժամանակը, երբէք չեն կարող ուղղել գործած չարիքը։
Ջօն Բեսկին

—

Արար աշխարհի մեղքը, էապէս, Ցուդայի մեղքն է։ Մարդիկ ոչ թէ միայն չեն հաւատում իրանց Քրիստոսին, այլ և ծախում են նրան։ Նոյն

—

Նա, որի հաւատը թոյլ է, չէ կարող ուրիշներին ևս հաւատ ներշնչել։
Լաո-ցէ

Մի դատապարտիր մեր ձայնակիցներին, որ դու էլ նրա օրումը չլինես։
«Թալմուդ»

Թարգմ. Գ. Բարուրեան

ՉԻՆԱՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՅՈԴԻԱԾԱԳՐԻՆ

«Մեծ հաճոյքով կարդացինք ձեր ձեռագիրը։ Երդւում եմ մեր նախնիների ածիւնների փոշիով, որ դրանից զեղեցիկ բան դեռ չենք կարդացել։

Ցպագրելով ձեր գրւածքը, մենք առիթ կտանք նորին մեծութեան՝ Բոգդիխանին թոյլ շտալու, որ այսուհետեւ դրանից թոյլ յօդւած տպագրենք։

Այդպիսի երկ յօրինելու համար հարկաւոր է հազար տարի մտածել։ Իսկ այժմս ցաւով յետ ենք դարձնում ձեզ ձեր գրւածքը ու խնդրում ենք հազար ու մի ներողութիւն եւ թողութիւն»։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ԽԱԹԱԲԱԼԱ

կոմպլէկտներ

ՇՔԵՂ ԿԱԶՄՈՎ

1906 թ.	5 ր.
1907 թ.	7 ր.
1908 թ.	7 ր.
1909 թ.	7 ր.
1910 թ.	7 ր.

Հին համարները հատով Թիֆլիսում 10 կոպ., Թիֆլիսից դուրս 12 կ.։ Դիմել՝ «Խաթաբալա»-ի գրասենեակին

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԳՐԱՄՄՈՖՈՆ ԸՆԿ.

Գ. Ս. ԴԱՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Թիֆլիս, Դոլով. պրոսպ. № 6, Ժողովար. տակ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

Բագրատի, Մաջիտի, Զաքարի և Իսմայիլի

—— ԵՐԳԵՐԸ ——

3 ռուբլու ՓՈԽԱՐԵՆ 2 ռուբլով

40 ՕՐ ! ՁՐԻ !

ԵԹԷ դուք 40 օրայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն սեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկլամ են),

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

Մի ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերադիր վճարով արժէ 1 ր. 10 կոպ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը — 2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ., Պատուէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար։ С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56--609, К К. Петерсъ. 482 0—3

(և. հ. շ.)

ԲՈԼՈՐՈՎԻՆ

Ե ՁԿԱՆ ԱՅԼԵՒՍ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ !!

!!Թէ Դուք հիւանդ եք թիֆլեասով, տրիպէրով, շանկերով, սեռական թաւալեթեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է օնանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկական գաղտնի հիւանդութիւնների տղեմարդու, կանանց միզասեռական օրգաններ», նկարներով և բազմաթիւ բէցէպտներով մօտ 250 երես։ Գինը ճանապարհածախսով ու վերադիր վճարով 1 ր. 30 կոպ.։ «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ր. 40 կոպ.։ Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով)։ Միակ պահեստը С.-Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К. Петерсу 484 0—3

(և. հ. շ.)

Ի-ԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍԻԱՑ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՑ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բէցէպտ կերակուրների, խմիչքների, թխուածքների, կոմպոտի, մուրաբաների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն։ 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերադիր վճարով 2 ր 60 կ.։ Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու մնդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելուածով, մօտ 100 երես, նկարներով։ Գինը 1 ռ. 20 կ., երկու գիրքը միասին 3 ռ. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով դիմել բացառապէս Я. К. Петерсу, С.-Петербургъ, Петербургск. сторона, Большой просп. №56—609, 483 0—3

(և. հ. շ.)

Первокл. ресторанъ „АННОНА“

„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ $1^1/_2$ час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. ИГРАЕТЪ КОНЦЕРТНЫЙ СТРУННЫЙ ансамбль подъ управленіемъ **Александеръ.**

ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. Получены Ростовск. раки, имѣется живаяр ыба; отъ жары можно спасаться только въ **„АННОНѢ“**

52—4

РԷՍՏՈՐԱՆ-ՃԱՇԱՐԱՆ

„ԴԻԼԻ ՊՈՒՖՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—5

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

Գինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և դիմում են զումարով գնողները։

Электропечатня „Культура“ Велчяминовская 18, Ժամանակաւոր-խմբագիր Ս. ՄՈՒՐՈՒԱՑՃԵԱՆ

—Սրանք քաղաքակրթուածներ են վա՜յ ինձ, եւ... մաշկս հանում են. իսկ եթէ բարբարոսներ լինէի՞ն՝ ի՞նչ կըլինէր իմ հալը, հոգիս էլ կըփախցնէին։